ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 16. Կազմակերպության իրավունքները

1. Կազմակերպությունն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի՝

1) իր անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող.

2) բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով.

3) ստեղծելու այլ կազմակերպություն կամ լինելու նրա մասնակից.

4) ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ.

5) տեղեկատվություն տարածելու իր գործունեության մասին.

6) կազմակերպելու և անցկացնելու խաղաղ, առանց զենքի հավաքներ.

7) օրենքով սահմանված կարգով ներկայացնելու ու պաշտպանելու իր և իր անդամների, շահառուների՝ կազնակերպության կանոնադրական նպատակներից բխող իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.

8) համագործակցելու այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծելու Կազմակերպություն կամ անդամակցելու նրանց ստեղծած Կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը.

9) կատարելու օրենքով չարգելված այլ գործողություն:

2. Կազմակերպությունը կարող է իր շահառուների կոլեկտիվ շահերի պաշտպանությանն ուղղված հայց ներկայացնել դատարան Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով:~~Կազմակերպությունն իր շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնում է հետևյալ ոլորտներում՝ #~~

~~1) շրջակա միջավայրի պահպանություն.~~

~~2) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանություն:~~

~~3. Կազմակերպությունը սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված ոլորտից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել, եթե՝~~

~~1) հայցադիմումը բխում է Կազմակերպության կանոնադրական նպատակներից և խնդիրներից և ուղղված է Կազմակերպության շահառուների՝ Կազմակերպության կանոնադրային նպատակների հետ կապված կոլեկտիվ շահերի պաշտպանությանը.~~

~~2) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում մասնակցել է հիմնադրութային փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին, կամ հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորություն չի տրվել, և~~

~~3) հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն է ծավալել սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում նշված ոլորտում:~~

(16-րդ հոդվածը խմբ., փոփ. 05.05.21 ՀՕ-198-Ն, փոփ. 14.06.23 ՀՕ-208-Ն)